վերջնականապէս լուծելու աշխատանքի եւ դրամագլխի նզովեալ կնճիռը, զէթ մեծապէս հարթելու այն ուղիները, որոնք անչեղ պիտի առաջնորդէին աշխատաւորին դէպի լիակատար ազատագրում: Գաղափարը վիթխարի էր. կոմպրոմիսներ չէր հանդուրժում, եւ դէպ իր նպատակը սլանում էր մրրկի պէս. աշխարհի քաղաքական ու համայնական, բարոյական ու հոգեւոր ամբողջ կառուցուածքն էր ղրնղում նրա հարուածների տակ:

Նա անդիմադրելի հրապոյր ունէր բոլոր ազատատենչ ու արդարութեան ծարաւ հոգիների համար. ամենէն վատատեսներն իսկ չընչաւոր սպասում էին, թէ ի՞նչ է լինելու: Համայն աշխարհի պրոլետարիատը ակնդէտ ու հմայքով հետեւում էր սկսուած խօլական շարժման յեղյեղումներին, որոնք Լենինի վարժ ղեկավարութեամբ յորձանք էին տալիս ռուսական լայնեղր հարթութիւնների վրայ:

«Ո՞ւր է տանում այս խռովայոյզ եւ յուսացող ցեղերին,— գրում էի ես 1917 թուի դեկտեմբերին,— ռուսական այս տիտանեան յեղափոխութիւնը. դէպի ո՞ր հորիզոններն է քաշում նա մրրկուած, ըմբոստացած մխոցն ու խիղճը բռնակալների դէմ ծառացած մարդու: Ահ, երանի թէ դէպի հոգեւոր, մտաւոր ու ֆիզիկ վերջնական ազատագրումը, երանի՜ թէ վիթխարի Դեմոսի վիթխարի թռիչքները թոյլ չը տան ցարական հիդրային վերստին երեւալու»:

Ցարիզմը տապալուեց, այո՛, եւ ըստ երեւոյթին անդարձ. եւ դա բոլշեւիկեան յեղափոխութեան դուցէ խոշորագոյն ծառայութիւնն է, որ անհնարին դարձրեց վերադարձը մղձաւանջային անցեալի:

Ցարիզմը տապալուեց, բայց այնուհետեւ անցած դարձածն ամբոխների վայրագ խելայեղութեան մի օրգիա է, որ արիւնոտ արտայայտութիւններով, իր հրէշաւոր ու անխմաստ նախճիրներով յիշեցնում է նախնական դարերի բարբարոսութիւնները, մարդկային ատաւիկ բնազդների անասնական բռնկումները:

Տարաբախտաբար ազատութեան ձգտումին համահաւասար յաճախ մարդու մէջ կրակի պէս մխում է իր նմանների վրայ իշխելուձգտումը: Եւ մի խումբ ամէն ցեղի ու լեզուի պատկանող յանդուգն արկածախնդիրներ խիզախ գաղափարն ունեցան տիեզերքը բախտաւորեցնել իրենց ուզած ձեւով, իրենց կրունկների տակ: Աշխատաւորի ազատագրութեան գաղափարը շատ շուտ տեղի տուեց իշխելու, բռնանալու անսահման տենչանքին եւ յանուն պրոլետարիատի բարձրացած ուժեղ բազուկը թափով իջաւ այդ իսկ պրոլետարիատի խոշտանգուած թիկունքին: Քաւութեան նոխազն ռուս ժողովուրդն էր, միակն աշխարհում, որ կարող էր տանել այս անլուր բռնութիւնը, քանի որ նա արդէն դարեր շարունակ ապրել էր ցարիզմի սանձարձակ հարստահարութիւնները:

Մենք տեսանք, թէ ի՞նչպէս եւ ինչո՞ւ համակերպուեց ռուս ժողովուրդը:

Տեսանք, թէ ինչո՞ւ այս բարբարոսական բեժիմը դիմանում է ահա տասն տարի: Եւ սակայն, բոլշեւիզմը դատապարտուած է, եւ նրա փլուզումը հեռու չէ, հակառակ ռուս ժողովրդի ողբալի ապատիային: Քաղաքական աբսուրդը ինքն իր մէջ կրում է կործանումի որդը, ինչպէս զէշ եւ ծուռ հիմի վրայ բարձրացած ճարտարապետական կառուցուածք:

Ամէն մի յեղափոխութեան իմաստը նախ եւ առաջ ազատութեան անպարփակ ու հզօր զգացմունքի պոռթկումն է, անհատական ու հասարակական խղճի անկաշկանդ ու բուռն արտայայտութիւնը:

Արդ՝ յանուն յեղափոխութեան ջնջել բոլոր եղած ազատութիւնները եւ դալիքի կարելիութիւններն իսկ, ինչպէս այդ արին բոլշեւիկները, հասարակական յեղաշրջումների մեծագոյն աբսուրդն է: Եւ երբ որեւէ յեղափոխութիւն հասնում է այդ ճակատագրական սահմանին, նա այլեւս ամենէն դաւադիր, ամենէն դարշ ըէակցիան է, որ ծառայում է ոչ թէ աշխատաւորութեան եւ առհասարակ համայնական բարօրութեան, այլ անհատների եւ ստոր հաշիւներով իրար կապուած խմբակցութիւնների շահերին:

Ռուսիայում իշխողն այսօր այդ ըէակցիան է, որ կրծոտում է անդամ ցարիզմից շորթած չնչին ազատութիւնները:

Եւ ես կատարելապէս հասկանում եմ Կերենսկուն, որ անցեալները մի ընկերական հա-